911 Արտակարգ թերթ

N 47(695)
15-21.12 2017

ISSN 1829-149X

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENSY SITUATIONS OF RA
МИНИСТЕРСТВО ПО ЧРЕЗВЫЧАЙНЫМ СИТУАЦИЯМ РА

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ

Պետական հավատարմագրում

ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 23 որոշմամբ շնորհվել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով՝ պետական հավատարմագրման վկայական No 20:

ՀՀ ԱԻՆ-ՈՂ ԱԻՆ ԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀՀ ԱԻՆ-ի ՈՂ անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության միջև ստորագրվել է համագործակցության պլան, որով նախատեսված է ապահովել բնական և մարդածին արտակարգ իրավիճակների ծագման կամ ծագման վտանգների մասին ազդարարում և տեղեկատվության փոխանակում, համատեղ ուսումնավարժությունների անցկացում, վթարավերականգնողական փրկարարական աշխատանքների կազմակերպում և արտակարգ իրավիճակներում տուժածների կենսագործունեության ապահովման միջոցառումների իրականացում: ■

Շարունակությունը՝ տես էջ 2

Լուսանկարները՝ mes.am-ի

Չորրորդը ՆՈՐ ՀԱՄԱԼՐՈՒՄ

Դեկտեմբերի 13-ին Հայաստանի Կոտայքի մարզի Գետարգել համայնքում գտնվող «Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնը» Ռուսաստանից փրկարարական գույքի չորրորդ խմբաքանակը ստացավ: Առաջինը այս տարվա մայիսին էր (փրկարարական գործիքներ, տարբեր հզորությամբ հոսանքի գեներատորներ, մոտոպոմպեր և այլն), երկրորդը՝ հոկտեմբերին (ամենագնաց-կվադրոցիկլներ), երրորդը՝ նոյեմբերին (մոտորանավակներ, ջրասուզակներին և սակրավորներին անհրաժեշտ հատուկ գույքով մեքենաներ, լուսավորության աշտարակներ, գեներատորներ, պոմպեր, շնչառական սարքեր, որոնողական սարքեր, ծածկոցներ, ծալովի մահճակալներ): Չորրորդ խմբաքանակ՝ 4 տոննա տարողությամբ ջրային բաքով «Կամազ» մակնիշի ամենագնաց հրշեջ-փրկարարական մեքենաներ, շենք-շինությունների ամրությունը ստուգող, սեյսմիկ ռիսկը գնահատող համալիր, ինժեներական և վթարափրկարարական վերապատրաստման գույք համապատասխան լսարանների համար, կենտրոնում կառուցվելիք ճգնաժամային կառավարման կենտրոնի համար սարքավորումներ, ջրափրկարարական հանդերձանք և այլն:

«Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնը» բացվել է 2016 թվականի մարտի 18-ին՝ ի կատարումն հայ-ռուսական միջկառավարական «Արդյունաբերական վթարների, տարերային աղետների կանխման և դրանց հետևանքների վերացման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի:

Նպատակն է՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետևանքների վերացմանն ուղղված հնարավորությունների և մեխանիզմների զարգացումն ու հզորացումը, տարածաշրջանային համագործակցության զարգացումը, բնակչության պաշտպանվածության և տարածաշրջանում տեղի ունեցած արտակարգ դեպքերին օպերատիվ արձագանքման մակարդակի բարձրացումը:

Հայկական կողմը նորոգել-բարեկարգել է 17,5 հա մակերեսով տարածք, շենք-շինություններ: Ռուսական կողմը պարտավորվել է ապահովել կենտրոնի տեխնիկական համալրումը:

Մինչև տարեվերջ կենտրոնում պատրաստ ու հատուկ տեխնիկայով և գույքով կահավորված կլինի վերապատրաստման երկու լսարան՝ ճարտարագիտական ապահովման և փրկարարական:

«Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնում» մեկ սենյակ կկահավորվի ու կդառնա ճգնաժամային կառավարման կենտրոն՝ Հայաստանի և Ռուսաստանի ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնների հետ մշտական կապով:

Բացի գույքային օժանդակությունից, կենտրոնը ՀՀ ԱԻ նախարարության հետ համատեղ Հայաստանի տարածքի ռիսկերի գնահատում է իրականացնելու:

Նշենք, որ «Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնը» արձագանքում չի իրականացնում, օգնում է փրկարար ծառայության ուժերին և տեխնիկա տրամադրում՝ կախված արտակարգ իրավիճակի բնույթից:

Կենտրոնի գույքն արդեն քանիցս օգտագործվել է տարբեր արտակարգ իրավիճակներում: Օրինակ, այս ամռանը անտառային հրդեհների ժամանակ բարձրլեռնային և դժվար հասանելի վայրերում տեղադրվել են կենտրոնի տրամադրության տակ եղած 1500 լ տարողությամբ ավազաններն ու ջուր մատակարարել հրշեջներին:

«Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի» գույքային համալրումը շարունակական է լինելու: Անցկացվելու են նաև վերապատրաստման դասընթացներ թե Հայաստանի և թե Ռուսաստանի մասնագիտական կառույցներում: ■

Կարևոր

ՄԵԿ ՄՈԼՈՐԱԿ

էջ 2

ԲԱՔՈՒ-ԳՅՈՒՄՐԻ ՕԴԱՆԱՎԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ



էջ 3

ՍՊԻՏԱԿԻ ՀՓՁ-Ի ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

էջ 4

ԱՇԽԱՐՀԻԿ ՄՈԼՈՐԱԿ - ԿԱՐԿԱՄ

էջ 6

911 Արտակարգ թերթ
N 47 (695)
15-21 դեկտեմբերի, 2017

Բարձր ցուցանիշներով

ՀՀ կառավարության գործունեությունն ուղղված է աղքատության մակարդակի նվազեցմանը: Այդ մասին ասել է վարչապետ Կարեն Կարապետյանը: «Դուք հաստատ տեսնելու եք՝ ինչպես ենք այդ ցուցանիշը կառավարելու և նվազեցնելու: Կառավարության ամբողջ գործունեությունը դրան է ուղղված»,- ասել է վարչապետը: Նա հավաստիացրել է՝ գործադիրը տարին ավարտելու է կանխատեսվածից բարձր ցուցանիշներով:

ԻՆ ԱՐԴ
2

ԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Սկիզբը՝ էջ 1

Պլանը մշակվել է 1994-ին կնքված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև արդյունաբերական վթարների, տարերային աղետների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի հիման վրա:

Պլանը ստորագրել են ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրեն, գեներալ-մայոր Մուշեղ Ղազարյանը և Հայաստանում Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության պետ, գեներալ-լեյտենանտ Անատոլի Միխեևը:

Անդրադառնալով Համագործակցության պլանի բովանդակությանը՝ ՀՀ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանն ընդգծել է, որ տեղեկատվության փոխանակումը, ազդարարումը և համատեղ ուսումնավարժանքները աղետներին համատեղ դիմակայելու գործընթացի հիմնասյունային բաղադրիչներից են:

Համագործակցության պլանի խնդիրներից է նաև քիմիական, կենսաբանական և ճառագայթային վարակների ենթարկված տարածքների բացահայտումը, սանիտարական միջոցառումների, արտակարգ իրավիճակներից հետո վերականգնողական միջոցառումների համատեղ իրականացումը և այլն: ■

ՄԵԿ ՄՈԼՈՐԱԿ

«Կանաչ տնտեսության» արդյունավետությունը

2015 թվականի դեկտեմբերի 1-12-ը Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում անցկացվեց Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիային միացած երկրների 21-րդ համաժողովը, որտեղ պետությունները հստակ պարտավորություններ ստանձնեցին. կրճատել ջերմոցային գազերի արտանետումները, զարգացնել վերականգնվող էներգետիկան և անցնել էներգախնայող տեխնոլոգիաների: Զարգացած երկրները խոստացան տարեկան 100 միլիարդ դոլար ծախսել զարգացող երկրներում նման ծրագրեր իրականացնելու նպատակով: Այս տարվա դեկտեմբերի 12-ին Փարիզում անցկացվել է «Կլիմայի ֆինանսավորման օր»՝ արդեն երրորդ միջազգային հավաքը, որի նպատակը կլիմայի փոփոխությունների դեմ պայքարի համար միջոցներ և աղբյուրներ գտնելն է: Այս հավաքի կարգախոսն էր «Մեկ մոլորակ»: 2015-ի համաժողովին մասնակցում էր 196 երկրի ներկայացուցիչ, որից 150-ը՝ նախագահ և վարչապետ: Այս տարվա հավաքին մասնակցում էր 59 նախագահ և վարչապետ, 39 նախարար, միջազգային կառույցների ղեկավարներ և խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների պատասխանատու պաշտոնյաներ. Total, Engie, Michelin, Tesla, Danone, L'Orەal: Մոլորակի ապագայի նկատմամբ հոգատարության կարևորությունն ընդգծելու համար ներկա էին արվեստի և շոու բիզնեսի ներկայացուցիչներ՝ դերասաններ Մարիոն Կոտիյարը, Լեոնարդո Դի Կապրիոն, Առնոլդ Շվարցենեգերը և այլք:

Փարիզում քննարկվել է չորս թեմա. «Փոխել կլիմայի փոփոխության ոլորտում գործողությունների ծավալը», «Ապահովել կայուն զարգացման օգտին «կանաչ» ներդրումներ», «Արագացնել կլիմայի փոփոխության դեմ

քայլերը տեղական և տարածքային մակարդակներում», «Ուժեղացնել բնապահպանական փոփոխությունների ոլորտում պետական քաղաքականությունը»:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիոու Գուտերիշի խոսքով. «Մարդկությունը պայքարում է մոլորակում կյանքի պահպանման համար և երկու հզոր դաշնակից ունի՝ գիտությունն ու տեխնոլոգիան: *«Կանաչ տնտեսությունն» ապացուցել է իր արդյունավետությունը: Պետք է ներդրումներ անել հենց այս ոլորտում՝ նոր տեխնոլոգիաներ, վերականգնվող էներգիա»*:

Դեկտեմբերի 12-ին Փարիզում ընդունվել է 12 կոնկրետ առաջարկ՝ ուղղված գլոբալ տաքացումից փրկությանը: Ներկայացնենք կարևորները:

Եկող տարվանից Համաշխարհային բանկը չի ֆինանսավորի նավթի և գազի հետախուզական աշխատանքները, իսկ ցանկացած այլ ոլորտի ներդրումային ծրագրի գնահատման պարտադիր բաղադրիչ կդառնա ջերմոցային գազերի, այդ թվում՝ ածխաթթու գազի արտանետումների ծավալը: Ապահովագրական հսկա ֆրանսիական Axa ընկերությունը հայտարարել է, որ չի ֆինանսավորի ածխաջրածիններ արտանետող ծրագրեր: Ընկերությունը հայտարարել է, որ 700 միլիոն եվրո կտա անվտանգ նավթատարներ կառուցելու և 9 միլիարդ՝ «Կանաչ տեխնոլոգիաների» համար:

Ավելի քան 200 խոշոր ներդրող պարտավորվել են ճնշել աշխարհի 100 ամենաշատ աղտոտող ընկերություններին՝ արտանետումների ծավալը նվազեցնելու և «Կանաչ տեխնոլոգիաների» անցնելու նպատակով:

Ֆրանսիական զարգացման գործակալությունը (AFD) խոստացել է Աֆրիկայի 15 երկրի առաջիկա չորս տարում 30 միլիոն եվրո տրամադրել կլիմայի փոփոխության դեմ պայքարի ծրագրերի համար: Բիլ և Մելինդա Գեյթսերը խոստացել են ավելի քան 600 միլիոն դոլար հատկացնել գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության հետևանքների հետազոտությունների համար:

Կշարունակվի «Կանաչ պարտատոմսերի» կամ «Կլիմայի պարտատոմսերի» թողարկումը: Այս պարտատոմսերի վաճառքից գոյացած գումարներն ուղղում են ջերմոցային գազերի արտանետումների կրճատման, «Կանաչ տեխնոլոգիաների» ներդրման ծրագրերին: 2016-ին թողարկվել է 90 միլիարդ եվրոյի «Կանաչ պարտատոմս», 2017-ին՝ 125 միլիարդի: ■

Հրապարակման պատրաստեց
Արամ ՉԱՔԱՐՅԱՆԸ

ԱՆՎՏԱՆԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանական վարքագծի ձևավորում՝ խաղերի միջոցով

2012-ից «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը Հայաստանի տարբեր մարզերում իրականացնում է «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագիրը: Նպատակն է նպաստել նախադպրոցական և դպրոցական կրթության բարելավմանը: Արդեն իսկ ներդրվել է 98 մլն դրամ:

Ծրագրի համակարգող Մարիա Պողոսյանի խոսքով՝ Խորհրդային Միության փլուզումից հետո տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինությանը հանձնված մանկապարտեզների մեծ մասը փակվել է: Մի շարք համայնքներ 20 տարուց ավելի նախադպրոցական կրթության հնարավորություն չունեն: Օրինակ, Գեղարքունիքի մարզի Այգուտ համայնքում բնակվող ծնողներն իրենց երեխաներին տանում են Վահանի մանկապարտեզ, որը հեռու է:

«Այն համայնքներում, որտեղ չկա նախադպրոցական ուսումնական որևէ հաստատություն, կառուցում ենք դպրոցահեն նախակրթարաններ 4-6 տարեկան երեխաների համար: Կազմակերպության կողմից հիմնադրվում է 60 քմ մակերեսով մեկ սենյակ և դրան կից սանհանգույցը՝ հարմարեցվելով երեխաների պահանջներին, անցկացվում է աշխատակազմի վերապատրաստում: Այնուհետև նախակրթարանը հանձնվում է դպրոցին»,- մանրամասնում է պատասխանատուն:

Նախակրթարան հիմնելու համար պարտադիր պայման է 4-6 տարեկան առնվազն 20-25 երեխայի առկայությունը, բացի դրանից՝ համայնքը պարտավորվում է ապահովել վերանորոգման աշխատանքների 15 տոկոսի ֆինանսավորումը: Ծրագրի առաջին փուլում Արմավիրի և Արագածոտնի մարզերում նորոգվել են որոշ դպրոցների մարզադահլիճներն ու հանդերձարանները, համալրվել է սպորտային գույքը: Երկրորդ փուլով նախակրթարաններ են կառուցվել Լոռու մարզի Արջուտ և Գեղասար, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Դրախտիկ, Այգուտ, Դպրաբակ, Ներքին Գետաշեն, Վարդենիկ, Վարսեր, Վաղաշեն և Գեղարքունիք համայնքներում. *«Նախագծային փուլում որոշ հանգամանքներ են հաշվի առնվել: Օրինակ՝ սողանքային գոտում գտնվող Այգուտի դպրոցի դեպքում նախակրթարանը կառուցել ենք տարրական դասարանների համար նախատեսված մասնաշենքում, որն, ի տարբերություն զառիվեր լանջին կառուցված մյուս մասնաշենքի, պաշտպանված է միջանցիկ քամիներից և ավելի բարվոք վիճակում է: Մեր բոլոր սենյակները տեղակայված են առաջին հարկում և ունեն առանձին ելք, որպեսզի մանկահասակ երեխաները կարողանան աղետի ժամանակ հեշտությամբ տարհանվել»:*

Ծրագրի մյուս առանցքային խնդիրը երեխաների անվտանգությունն ու աղետների ռիսկի նվազեցումն է: Այս նպատակով տարիներ շարունակ սերտ համագործակցություն է հաստատվել փրկարարական կառույցների հետ: Օրերս՝ դեկտեմբերի 13-15-ը, Գեղարքունիքի մարզի Վարսեր, Վաղաշեն և Գեղարքունիք համայնքների դպրոցներում իրականացվել են երկրաշարժի ժամանակ տարհանման թեմայով վարժանքներ՝

մարզային փրկարարական վարչության հսկողությամբ: Մարիա Պողոսյանը նկատում է՝ թեև երեխաները տեղյակ էին գործողությունների հաջորդականությանը, այդուհանդերձ, խուճապից խուսափել չեղավ. *«Երկու փոքրիկներ վախեցել էին կատարվածից և լալիս էին: Ծրագրի նախորդ փուլում մենք մշակել էինք խաղեր երկրաշարժի, հրդեհի և սողանքի ժամանակ ճիշտ վարվելակերպի վերաբերյալ: Հույս ունենք՝ նման խաղերի միջոցով երեխաների մեջ կձևավորվի պաշտպանության հստակ վարքագիծ»:*

Ինչ վերաբերում է ավագ դպրոցականներին, ծրագրի համակարգողը հավելում է՝ նախորդ փուլում Հայկական կարմիր խաչի հետ համագործակցությամբ վարժանքների ժամանակ տրամադրվել էին բժշկական պարագաներով առաջին բուժօգնության պայուսակներ, որոնցից, սակայն, դպրոցականներն օգտվել չէին կարողացել բավարար գիտելիքի բացակայության պատճառով: *«Վերջին վարժանքի ժամանակ տուժածին վիրակապելիս երեխան մոռացել էր շտապօգնություն զանգել:*

Այլ բացթողումներ ևս եղել էին, օրինակ՝ արյունահոսության ժամանակ վիրակապ դնելու ժամը ֆիքսելը: Նման հարցերում օգնում են փրկարարների խորհուրդները»,- ամփոփում է Մարիան: ■

ԱՆԻ ԱՆՏՈՆՅԱՆ

911 Արտակարգ թերթ
N 47 (695)
15-21 դեկտեմբերի, 2017

Հաշվարկ

Տոն օրերն ու սգո, հիշատակի օրերը միասին տարվա կտրվածքով 20-21 օր են կազմում, այսինքն՝ գրեթե մեկ ամիս ոչ աշխատանքային է: Մեկ ամիս հերթական արձակուրդն էլ գումարելով՝ երկու ամիս է դառնում ոչ աշխատանքային: 11 ամսում, եթե հաշվենք, որ մեկ ամիսը չենք աշխատում, ստեղծում ենք 10,5 մլրդ ՀՆԱ, մեկ ամսվա ՀՆԱ-ն մոտ 900 մլն է: Եթե տոներին ընդամենը 5-6 օր աշխատենք, ՀՆԱ-ի լրացուցիչ՝ մոտ 3-4 տոկոսով ավելացման պահուստային հնարավորություն ենք ունենում:

Մեջբերում
3

ԲԱՔՈՒ-ԳՅՈՒՄՐԻ ՕԴԱՆԱՎԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ 1988-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ

Բացահայտում. ինչո՞ւ է դա եղել

1988 թ. դեկտեմբերի 11-ի վաղ առավոտյան Գյումրիի օդանավակայանից 15 կմ հեռավորության վրա, վայրէջքից մի քանի րոպե առաջ, բախվելով մոտակա լեռներին, կործանվեց Բաքվից Գյումրի թռչող «ԻԼ-76Մ» ինքնաթիռը:

69 ուղևորներից և անձնակազմի ինը անդամներից փրկվեց միայն մեկը՝ ազգությամբ ադրբեջանցի Ֆահրադին Բալաևը, որը բախտ էր ունեցել գտնվելու օդանավի պոչի հատվածում տեղավորած բեռնատար ավտոմեքենայի մեջ: Հայաստանի տարածքում սա արձանագրված ամենախոշոր օդային աղետն է, որի մասին Հայաստանում և նրա սահմաններից դուրս հավանաբար քչերն են տեղյակ:

Մանրամասները կշարադրեմ մեկ պարբերությունից, սակայն մինչ այդ բացատրեմ, թե ինչո՞ւ եմ միայն այսօր՝ գրեթե երեք տասնամյակ անց անդրադառնում այս պատահարին: Ադրբեջանական CBC (Caspian Broadcasting Company) արբանյակային հեռուստաընկերությունը, որը հեռարձակվում է հիմնականում ռուսերենով (լուրերի թողարկումներ ունի նաև անգլերեն, հայերեն և պարսկերեն), դեկտեմբերի 11-ի երեկոյան հեռարձակեց մի ֆիլմ, որը պատմում էր «ԻԼ-76Մ»-ի կործանման մասին՝ ծայրից ծայր կեղծելով պատմությունը:

Բաքվից Գյումրի թռչող ինքնաթիռի կործանման մասին ժամանակին շատ քիչ է գրվել երկու պատճառով: Առաջին՝ Խորհրդային միության տարիներին, անգամ 1988 թ., օդային աղետների մասին ոչ միայն քիչ էին գրում, այլև փորձում էին դրանք թաքցնել հասարակությունից: Երկրորդ և հիմնականը՝ «ԻԼ-76Մ»-ի կործանումը տեղի է ունեցել 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժից ընդամենը չորս օր անց, և, բնականաբար, 25 հազար մարդու կյանք խլած աղետի խորապատկերին, օդային այս պատահարը չէր կարող համընդհանուր ուշադրություն գրավել:

Ադրբեջանը միայն վերջին տարիներին է քարոզչական նպատակներով մեջտեղ բերել օդանավի կործանման դեպքը, և դա փորձում է օգտագործել ընդդեմ Հայաստանի: Եթե նախկինում ադրբեջանական կողմը խորհրդավոր էր համարում «ԻԼ-76Մ» օդանավի աղետը, ապա այսօր ուղղակի մեղադրում է Հայաստանին, թե իբր օդաչուներին միտումնավոր տրվել են ոչ ճիշտ կոորդինատներ, ինչի հետևանքով օդանավը բախվել է լեռներին: Իրականությունն այն է, որ օդանավի կործանման պատճառը, ըստ «սև արկղի» և պաշտոնական եզրակացության, եղել է անձնակազմի սխալը: Փորձաքննությունը պարզել է նաև, որ անձնակազմը թռիչքից առաջ չի ունեցել բավարար հանգիստ, իսկ նախորդող օրերին կատարել է մի քանի անընդմեջ չվերթեր:

Ի դեպ, 1988 թ. դեկտեմբերյան այդ օրերին Հայաստանում եղանակային պայմանները եղել են խիստ անբարենպաստ: Այդ օրերին կործանվեց ևս մեկ ինքնաթիռ, որն օգնության էր գալիս Հարավսլավիայից: Այն ընկավ Էջմիածին և Արմավիր քաղաքների միջև գտնվող դաշտավայրում: Պնդումներ կան, որ կործանումից հրաշքով փրկվել է ԽՍՀՄ առաջնորդ Միխայիլ Գորբաչովի օդանավը: Գորբաչովը երկրաշարժի օրը Նյու Յորքում էր: Նա դադարեցրեց այցը և ժամանեց աղետի գոտի՝ Գյումրի:

Բաքուն հայտարարում է, թե «ԻԼ-76Մ»-ն ադրբեջանական ինքնաթիռ էր, օգնության էր շտապում աղետյալներին, և «նենգ» հայերը խոցեցին այն: Իրականում օդանավը պատկանում էր ԽՍՀՄ պաշտպանության նախարարությանը՝ Լիտվայի տարածքում տեղակայված ռազմաօդային ուժերին: Օդանավի ողջ անձնակազմը՝ ինը հոգի, ռուսներ էին (ահա նրանց ազգանունները՝ Բրիլյով, Սոկոլով, Ռազումնի, Պլաշկին, Իվլև, Շերկով, Ռիբալչենկո, Ավիլով, Ալտուխով): Ադրբեջանական կողմը շարունակաբար հայտարարում է, թե օդանավում ադրբեջանցիներ էին, ինչը մասամբ է համապատասխանում իրականությանը: Կործանված օդանավի կազմը բազմազգ էր՝ 50 ադրբեջանցի, 13 լեզգի, 11 ռուս, երկու թաթար, մեկ հայ և մեկ հրեա: Բոլորը ԽՍՀՄ զինված ուժերի պահեստազորի ծառայողներ էին, որոնք Գյումրի էին գալիս փրկարարական աշխատանքներ կատարելու նպատակով: Միակ փրկվածը՝ ադրբեջանցի Ֆահրադին Բալաևը, մահացել է 2010-ին: Ադրբեջանցիները հայտարարում են, թե օդանավի կործանումից հետո Բալաևին Գյումրիում միտումնավոր կերպով օգնություն չի ցուցաբերվել, մինչդեռ իրականությունն այն է, որ Գյումրիից ռազմական ինքնաթիռով նրան հասցրել են Մոսկվա, որտեղ բուժվել և վերադարձել է Ադրբեջան:

Դեկտեմբերի 7-ի երկրաշարժը ցնցել էր ողջ աշխարհը: Հայաստանը օգնություն էր ստանում ինչպես արտերկրից, այդ թվում՝ Սփյուռքից, այնպես էլ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից, այդ թվում՝ Ադրբեջանից: Ճիշտ է, ղարաբաղյան խնդիրն արդեն ջրբաժան էր գծել հայերի և ադրբեջանցիների միջև, տեղի էր ունեցել Սումգայիթի ջարդը, սակայն Հայաստանն ու Ադրբեջանը դեռևս գտնվում էին և մինչև 1991 թ. գտնվելու էին ԽՍՀՄ կազմում: Աղետի օրերին Հայաստանում հավաքվեց ԽՍՀՄ ղեկավարությունը, որոնց մեջ էր նաև Ադրբեջանի առաջնորդ Աբդուռահման Վեզիրովը: Ճիշտ է նաև, որ երկրաշարժի առիթով Հայաստանի ժողովրդին և ղեկավարությանը ցավակցություն հղեց Ադրբեջանի կառավարությունը: Ավելին, Խորհրդային Հայաստանի կառավարությունը շնորհակալական դիպլոմի արժանացրեց նաև Ադրբեջանից եկած փրկարարներին (խումբը ղեկավարում էր Էմիլ Ախունդովը), ովքեր հաստատվել էին Գյումրիին մերձակա Ղարիբջանյան գյուղում և հիմնականում օգնում էին Ամասիայի շրջանի գյուղերին: Ամասիայի շրջանը ավելի քան 70 տոկոսով ադրբեջանաբնակ էր:

Իրականում Ադրբեջանի օգնությունը Գյումրիի երկրաշարժին եղել է խիստ սահմանափակ երկու հիմնական պատճառով: Առաջին, ինչպես նշեցի, հայ-ադրբեջանական հակամարտությունն արդեն սկսվել էր, երկրաշարժի օրերին Բաքվից Երևան էին հասնում գնացքի վագոններ, որոնց վրա մեծ տառերով հայ ժողովուրդը երկրաշարժի առիթով շնորհավորանքներ էր ստանում: Այսօր էլ որոշ ադրբեջանցիներ համարձակվում են բարձրաձայնել, որ ամաչում են իրենց հայրենակիցների այդ արարքի համար: Երկրաշարժից հետո Ադրբեջանի տարածքում թալանվում էին այն գնացքները, որոնք օգնություն էին բերում աղետյալներին ԽՍՀՄ զանազան քաղաքներից: ԽՍՀՄ տարիներին Հայաստանի ապրանքաշրջանառության շուրջ 85 տոկոսն իրականացվում էր Մախաչկալա (Դաղստան)-Բաքու-Նախիջևան-Երևան երկաթուղով:

Երկրաշարժից տուժածներին օգնության նպատակով Ադրբեջանից առաջին ինքնաթիռը Գյումրիի օդանավակայանում վայրէջք է կատարել դեկտեմբերի 9-ի առավոտյան: Այսօր ադրբեջանական քարոզչությունը, խեղաթյուրելով իրականությունը, կեղծ լուրեր է տարածում, թե իբր այդ օդանավը վայրէջքից հետո 11 ժամ պահվել է Գյումրիի օդանավակայանում, հայերը օգնության եկած ադրբեջանցի փրկարարներին անգամ ջուր չեն տվել: Անբարոյական կեղծիքները դրանով չսահմանափակվեցին: Ֆիլմում ասվում էր, թե իբր ֆրանսիացի փրկարարները աղետի գոտում հայտնաբերել են ադրբեջանցի սպանված երեխաների, որոնց նախքան դեկտեմբերի 7-ը դաժանաբար սպանել էին հայերը:

Ադրբեջանական կողմն այսօր կրկին շրջանառության մեջ է դրել 1988 թ. դեկտեմբերի 11-ին կործանված Բաքու-Գյումրի օդանավի դեպքը՝ փորձելով հակակշռել և հավասարության նշան դնել 2014 թ. նոյեմբերին Արցախ-Ադրբեջան շփման գծին մոտ տարածքում խոցված հայկական ուղղաթիռի միջև: Բաքվում, հավանաբար, մտածում են այս եղանակով մեղմել միջազգային հանրության արձագանքը, որը, թեկուզ անուղղակի կերպով, դատապարտեց ադրբեջանական կողմի սադրիչ քայլը՝ ուսումնավարժական թռիչք կատարող ուղղաթիռի խոցումը: ■

Թաթուլ ՀԱԿՈԲՅԱՆ
գրող, հրապարակախոս

ՏՈՆ ՕՐԵՐԸ ԵՐԵՔՈՎ ԿՊԱԿԱՍԵՆ

ՀՀ կառավարությունը առաջարկում է փոփոխել «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը և տոնական ու ոչ աշխատանքային օրերի ցանկից հանել հունվարի 3-ը, 4-ը, 5-ը:

Այսինքն՝ տարեվերջ-տարեսկզբին՝ Ծննդյան տոներին կունենանք չորս ոչ աշխատանքային օր. դեկտեմբերի 31, հունվարի 1, 2, 6:

Կառավարության դրական եզրակացություն ստացած նախագիծը կներկայացվի Ազգային ժողովին:

Կառավարության առաջարկի համաձայն՝ փոփոխությունն ուժի մեջ կմտնի 2018-ի հունիսի 1-ից:

Կառավարությունում վստահ են, որ այս փոփոխությունը կնպաստի հայկական տոնացույցում միայն ավանդական հայկական տոների առկայությանը և պետական մակարդակով նշելուն և կապահովի պետության սոցիալ-տնտեսական և ֆինանսական համակարգերի նորմալ կենսագործունեությունը:

Ըստ նախագծի հիմնավորման, մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը հավաստում է, որ «տոն»-ը բուն հայերեն բառ է և նշանակում է հասարակական հանդես, հանդիսավոր օր: Հեռավոր անցյալում տոն է կոչվել աստվածներին մատուցած զոհը, զոհաբերվող կենդանին, որևէ հանդիսության նվիրված խնջույքը: Ժամանակների հետ տոնի իմաստը սեղմվել է, կայունացել և ստացել *նշանավոր դեպքի կամ իրադարձության առիթով տեղի ունեցող հանդիսություն կամ հանդիսավոր օր* իմաստը:

Հայաստանի Հանրապետությունում, համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-159-րդ հոդվածների, ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը 28 օրացուցային օր է՝ այդ ընթացքում պահպանվում է աշխատատեղը և վճարվում միջին աշխատավարձը: Գումարած 15 ոչ աշխատանքային օր՝ ազգային տոներ և հիշատակի օրեր, ստացվում է նվազագույնը 43 վճարվող հանգստյան օր տարեկան:

Աշխարհի ամենազարգացած երկրներից մեկում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում աշխատողներն ընդհանրապես չունեն վճարվող արձակուրդ, եթե չհաշվենք ընդհանուր առմամբ մոտ 10 օր ոչ աշխատանքային ազգային տոները: Բրազիլիայում շարքային աշխատողները տարեկան ստանում են 30 օր վճարվող արձակուրդ՝ գումարած 11 ոչ աշխատանքային ազգային տոները, Մեծ Բրիտանիայում ազգային տոները կարող են ներառվել ընդհանուր վճարվող արձակուրդի օրերի մեջ: Լեհաստանում վճարվող արձակուրդի օրերի ընդհանուր թիվը հասնում է 26-ի, Ավստրիայում, Դանիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Լյուքսեմբուրգում և Շվեդիայում դրանք 25-ն են: Ավստրիացիները նաև ունեն 13 տոնական օր, այնպես որ արձակուրդի ընդհանուր ժամկետը կազմում է 38 օր: Հնդկաստանում՝12 օր (գումարած 28 տոնական օր), Չինաստանում՝ 10 օր (տոների հետ՝ 21), Թայլանդում՝ 6 օր (ընդհանուր՝ 22) և Ֆիլիպիններում՝ 5 օր (տոների հետ միասին՝ 20): ■

911 Արտակարգ թերթ
N 47 (695)
15-21 դեկտեմբերի, 2017

Նրա խոսքով

Սպիտակի ՀՓՁ-ի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Սերոբ Գաբրիելյանին Սպիտակում և տարածքի 21 գյուղերում վերաբերվում են խորին հարգանքով: Խարիզմատիկ կերպարով փրկարարին ճանաչում են բոլորը՝ մեծից փոքր: Տեսնել է պետք, երբ նա մտնում է ժողովված մարդկանց մեջ, բազմությունը ճեղքվում է, հետո համախմբվում նրա շուրջ, առաջնորդվում նրա խոսքով...

ՍՊԻՏԱԿԻ ՀՓՁ-Ի ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Նրան «գեներալ»՝ գլխավոր փրկարար են ասում

Սպիտակում ամեն ինչ նոր է: Երկրաշարժից հետո Փամբակի լեռնաշղթան գրկած հարթավայրում փռված քաղաքում ամեն ինչ կարծես սպիտակի՝ ճեփ-ճերմակի մեջ է՝ տարվա բոլոր եղանակներին: Սպիտակ գույնն այստեղ չեն նկատում: 28 տարի է անցել կործանարար աղետից, մարդիկ կորցրածի ցավով են ապրում՝ Սպիտակի հին հուշերում: *«Օր չի լինում, որ երկրաշարժի մասին չխոսենք, չհիշենք ահավոր օրը՝ դեկտեմբերի 7-ը»,*- հուշերի մեջ՝ տխրամած ասում է Սպիտակի ՀՓՁ-ի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Սերոբ Գաբրիելյանը, որի գլխավորած հրշեջ- մասն այսօր տեղակայված է Օձի ձորի պռնկին, Վանաձոր տանող ճանապարհին:

Երկրաշարժի ժամանակ Սերոբ Գաբրիելյանը քաղաքում էր: Բանակային էր: Ծառայությունն անցկացնում էր Բաքվում: Նոյեմբերի 25-ին թույլտվություն ստացավ գալ Սպիտակ՝ մասնակցելու եղբոր հարսանիքին: Պատմում է. *«Ղարաբաղյան շարժում, Սումգայիթյան ջարդեր, Բաքվում հակահայկական տրամադրություններ: Ջորամասը տագնապի ռեժիմով էր ապրում: Եկա կայարան: Մոտեցա վագոնի թուրք ուղեկցողին: Հարցրեց՝ «Էրմանի՞, ի՞նչ ես անում էս կողմերում», զգուշացրեց, որ գնացքը չի հասնելու Իջևան, վերջին կանգառը Ղազախին՝ հայկական սահմանին մոտ է լինելու: Նստեցրեց իր «կուպեն» ու պատվիրեց, որ՝ ով ինչ հարցնի, ոչինչ չասեմ: Դուռը փակում էր ու գնում իր պարտականություններին: Իջա Ղազախում: Մնացել եմ մենակ, ասացի ինքս ինձ՝ ինչ լինելու է, թող լինի, ու ոտքով բռնեցի սահմանի ճանապարհը: «Մոսկվիչ» էր գալիս, ձեռքս բարձրացրի՝ կանգնեց: Հարցրեցի՝ սահման կտանե՞ս, ասաց՝ ոչ: Քշեց մեքենան առաջ, հետո ետընթաց եկավ կողքիս կանգնեց, թե՝ նստիր: Սահմանին ռուսական զինվորներ էին կանգնած: Էդպես հասա տուն: Վա՜յ էն հարսանիքին՝ ոնց որ պատերազմի դաշտից տուն եկած լինեի»,*- հիշում է Սերոբ Գաբրիելյանը: Հետո նորից վերհիշում անցածը, պատմում. *«Հաջորդ շաբաթ երկրաշարժը եղավ: Մեր տունը փլվեց, բայց ընտանիքի անդամներից ոչ ոք չտուժեց»:* Այսօր հին տան տեղում փոքրիկ «դոմիկ» է դրված: Տունը Սպիտակի ՀՓՁ-ի հարևանությամբ է՝ նույն փողոցում: Հիմա այնտեղ ոչ ոք չի բնակվում՝ «ուզբեկական» ճերմակ թաղամասում են ապրում: Իսկ տանը կից ավտոտնակը ՀՓՁ-ի համար լրացուցիչ պահեստարան է ծառայում: Ավտոտնակի բանալու տեղը բոլոր ջոկատայինները գիտեն:

Երկրաշարժի օրվա վաղ առավոտյան Սերոբ Գաբրիելյանը հոր հետ զինկոմիսարիատում էր: Որոշել էր՝ պիտի հետ գնար Բաքու՝ ծառայությունը շարունակելու: Ծնողները չէին թողնում: Բայց հարգեցին նրա որոշումը: Հոր հետ գնաց զինկոմին խնդրելու, որ զորամասի հրամանատարությանը հեռագրով տեղյակ պահի իր ուշանալու մասին: Հեռագիրն ուղարկելու պահին՝ 11:41-ին, երկրաշարժը եղավ: Սկզբում չհասկացան, թե ինչ կատարվեց: Դուրս եկան ավերված շենքից, քաղաքը փոշու ու հրդեհի մեջ տեսան: Հիշում է. *«Օձի ձորում «նեֆտոբազան» էր: Բենզինն ու կերոսինը գետի պես թափվել էին հողի մակերեսին: Այդ պահին թե մի կայծ լիներ՝ Սպիտակը կջնջվեր երկրի երեսից»:* Ամենուրեք հրդեհներ էին, բայց, բարեբախտաբար, այդ կայծը չեղավ:

Ավերակներում փրկարարական աշխատանքներին մասնակցեց, ուզում էր մնալ, օգնել քաղաքին, բայց կարգ ու կանոնի մարդ էր, պիտի գնար Բաքու՝ ծառայությունը շարունակելու: Քաղաքացիական հագուստով Թբիլիսիով գնաց: Բարեհաջող հասավ զորամաս, ու զարմացան նրա վերադարձից: Նրան հուշեցին, որ կարող է նամակ գրել Անդրկովկասյան զինվորական օկրուգ, խնդրել, որ իրեն տեղափոխեն Հայաստան: Խնդրանքը չմերժվեց: Որպես սպիտակցի՝ 20-ամյա բանակայինը ծառայությունը շարունակեց հայրենի քաղաքում:

Կիրովականի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղում էր սովորում՝ մեխանիկ-ինժեների մասնագիտությամբ: Բանակից հետո որոշեց հեռակայել: Դժվարությունները շատ էին: «Դոմիկում» էին ապրում: Աշխատել էր պետք, ավերից կորցրածը վերականգնել էր պետք: Ուսումն ավարտեց 1992-ին: Սպիտակում շինարարությունը եռում էր: Սկզբում աշղեկ էր, հետո՝ տեղամասի պետ: 1994-ին՝ որպես տեսուչ աշխատանքի անցավ հայրենի քաղաքի հրշեջ-մասում, դարձավ ավագ տեսուչ, հետո՝ հրշեջ-մասի պետի տեղակալ: Ավագ սերժանտի կոչումով էր զորացրվել բանակից, նոր ծառայությունում լեյտենանտի կոչում ստացավ: 2005-ի հուլիսի 15-ին նշանակվեց Սպիտակի հրշեջ-մասի պետ: Մինչև երկրաշարժը Սպիտակի հրշեջ-մասը սովետական նորմատիվներով կառուցված տիպային շենք էր՝ կանգնած այսօրվա անգարի տեղում: Երկրաշարժին շենքն ավերվեց: 6 հրշեջ, նրանց թվում՝ 1 կին, մնացին փլատակներում: *«Որոշեցի, եթե պետը ես եմ, ուրեմն ծառայությունն այլ կերպ պետք է լինի: Պետք էր այնպիսի պայմաններ ստեղծել, որ հերթափոխը հաճույքով աշխատեր: Առաջին հերթին պիտի բարելավեի աշխատանքային պայմանները, հետո նոր կարող էի պահանջել լավ աշխատանք: Մարդը հրդեհաշիջումից վերադառնում էր մրոտ, ցեխոտ, մաքրվելու, լողանալու հնարավորություն չկար: Հրշեջ-«դոմիկում» վառարանի կողքին խեղճ ու կրակ կանգնած՝ սրտիս չէր տալիս: Պիտի փոխվեր ամեն ինչ, և փոխեցի»,*- պատմում է ջոկատի հրամանատարը:

Նոր շինություն ունենալու հարցը բարձրացրեց ամենուր՝ խորհրդակցությունների, ժողովների ժամանակ, քաղաքային և մարզային իշխանությունների հետ հանդիպումներում: *«Զուր: Պատասխանը միշտ նույնն էր՝ միջոցներ չկան,*- ասում է ու անկեղծանում,- *խոսքս էլ, երևի, որպես երիտասարդի խոսք էր ընկալվում, ու գործը տեղից չէր շարժվում»:* Բայց Սերոբ Գաբիրելյանը շարունակում էր պահանջել ու այդպես՝ մի քանի տարի: *«Որ տեսնում էի տղաներին «դոմիկի» մեջ, վառարանի կողքին, ես ինձ հրամանատար չէի զգում: Մեղավոր էի զգում: Անգարի մեջ էլ «գարաժ» էինք սարքել, որ մեր երկու մեքենաները ցրտից չսառչեն: Տեսա՝ հույս չկա, խնդրելով ու պահանջելով՝ ոչինչ դուրս չի գա»,*- հիշում է հրամանատարը: 2007-ի հոկտեմբեր ամսվա օրերից մեկում որոշեց «դոմիկը» քանդել և համառ ու հաստատակամ գործի անցավ. *«Եթե այս գիշեր ֆունդամենտը չկտրեցինք, գործը գլուխ չենք բերի երբեք»:* Եվ ցուրտ գիշերով սկսվեց մեծ շինարարություն: Հրշեջ-մեքենաների լուսարձակների լույսով տրակտորը կտրեց այսօրվա շենքի հիմքերը: Սպիտակցի հրշեջներից ո՞վ չգիտեր շինարարական գործը: Հրամանատարն իր ուժերով, անձնական կապերով գտավ, բերեց երկաթբետոնե պանելներ: Եթե հրշեջները հերթափոխով էին աշխատում, ապա հրամանատարն՝ ամեն օր, նրանց հետ հավասար: Կանգնեցրին պատերը, տանիքը կապեցին: Մնաց գաջի գործը, իրենց մեջ գաջ քսող չգտնվեց, իրենք չարեցին, դրկից տներից մեկի հարևանին խնդրեցին՝ օգնեց: Շենքը կառուցվեց: Հրամանատարը հաջողեց հրշեջ-մասն ապահովել նաև գազով, եռաֆազ հոսանքով: Մեքենաները ջրով ապահովելու համար արտեզյան ջրհոր փորեց: Շենքն այսօր հնին նման չէ. ճերմակ պատերով միահարկ կառույց է՝ կումունալ-կենցաղային բոլոր հարմարություններով: Շենքը կառուցվեց, ու առաջին հերթին հիշեցին երկրաշարժից զոհված հրշեջներին: Ծաղկազարդ շինության դիմաց հուշաքար-խաչքար կանգնեցրին: Ամեն օր հերթափոխն իր աշխատանքը սկսում է հենց այդտեղից՝ նրանց հիշատակին լուռ հարգանքի տուրք մատուցելով: Ու թարմ ծաղիկներն հուշաքարին դրված են միշտ, որովհետև առաջնային իրենց ծառայությունն անպատկերացնելի է առանց անցյալի հուշի: Այսօր արդեն հրշեջ-փրկարարական ջոկատի կազմակերպած միջոցառումներին պարտադիր մասնակից են հին ու նոր բոլոր հրշեջները, դրկիցներն ու նաև... հուշաքար-խաչքարի վրա փորագրված վեց անուն հրշեջները: Նրանց ուրախությունը սպիտակցիներինն է: Նոր տարին էլ տոնում են Ձմեռ պապի ու Ձյունանուշի հետ: Կատակում է հրամանատարը. *«Մի տարի Ձյունանուշը Վանաձորի պետական թատրոնից մի սիրուն աղջիկ էր: Տղաները հմայված էին նրա տեսքով: Ամեն բան թողել՝ միայն նրան էին նայում»:*

Վաստակաշատ փրկարարին դժվար է զրույցի հրավիրել: Համեստորեն լռում է միշտ, ժպիտով դիմավորում հյուրին, օգնության ձեռք մեկնում:

Մարտական բարձր պատրաստվածության համար ջոկատը բազմաթիվ պատվոգրեր ու շնորհակալագրեր ունի. դրանցով է զարդարված փրկարար փոխգնդապետի աշխատասենյակը, և նորը կախելու տեղ էլ կարծես թե չի մնացել: Ու դրանց շարքում ամենանվիրականը, թերևս, համարում է շնորհակալագիրը, որին արժանացել են 2014-ի հունվարի 23-ին Սպիտակ քաղաքի փայտյա երկհարկանի հանրակացարանում բռնկված խոշոր հրդեհի մարման աշխատանքներին անձնվեր մասնակցություն ունենալու համար: *«Արդեն մտածում էինք քաղամասը տարհանելու, այրվող շենքի մի մասը քանդելով՝ կրակը մեկուսացնելու մասին: Տրակտոր, էքսկավատոր բերեցինք, 4 մարտական հաշվարկ եկավ, քաղաքապետարանի ջրի մեքենան: Հրաշքով կարողացանք թաղամասը փրկել կրակից՝ առանց շենքը քանդելու և տարհանելու: Անձնվեր աշխատանքի համար քաղաքապետարանը 10 հրշեջների դրամական խրախուսանքի արժանացրեց: Բայց տղաների համախմբումն այնքան մեծ էր, որ, իմ որոշմամբ, խրախուսանքի արժանացան բոլորը»,*- պատմում է հրամանատարը:

Սպիտակի երկրաշարժից հետո Սերոբ Գաբրիելյանը խոր ցավով է վերաբերվում բոլոր աղետներին: Երբ 2012-ին Տոկիոյում մասնագիտական վերապատրաստման դասընթացներին էր մասնակցում, ականատես եղավ 2011-ի մարտի 11-ին երկրաշարժի և ցունամիի հետևանքով ավերված «Ֆուկուսիմա-1» ատոմակայանի վթարի վերացման աշխատանքներին: *«Ինձ այնքա՜ն ծանոթ տեսարաններ էին. մենք արդեն Սպիտակի երկրաշարժ էինք տեսել, նույն ավերված, կիսաքանդ շինություններն էին: Այդ տեսարաններից ազդված՝ մտադրվեցի Սպիտակում հուշաքար-խաչքար տեղադրել»,*- ասում է փրկարարը: Մտադրվեց ու տեղադրեց: Խաչքարն այսօր դարձել է ճապոնացի զբոսաշրջիկների ուխտավայր: Նրանց համար ուխտավայր է դարձել նաև Սպիտակի ՀՓՁ-ն, գալիս են, հարգանքի տուրք մատուցում զոհված ջոկատայիններին ու հեռանում՝ իրենց հետ տանելով սպիտակցու հայկական ոգուց ամենագլխավորը՝ մարդասիրությունը: Ու շարունակվում է ուխտագնացությունը Սպիտակ... վերջին ժամանակների երկրաշարժերի պատմության մեջ ամենաավերիչ էպիկենտրոնը: *«Ճապոն ժողովուրդը յուրահատուկ է, հայկականին մոտ են թե՛ վարք ու բարքով, թե՛ հյուրընկալությամբ»,*- նշում է զրուցակիցս: 1988-ը և 2011-ը սգո տարիներ են Հայաստանի և Ճապոնիայի համար: Մեր երկրում Ճապոնիայի դեսպան էյջի Տագուչին՝ տիկնոջ հետ, տարին երկու անգամ՝ մարտի 11-ին և դեկտեմբերի 7-ին, ուխտագնացության է գալիս Սպիտակ: Այս տարվա դեկտեմբերի 7-ին էլ հրամանատարի գլխավորությամբ դիմավորեցին դեսպանին: Կարևոր միջոցառումներում փ/ծ փոխգնդապետ Սերոբ Գաբրիելյանը էյջի Տագուչիի ցանկալի հյուրերից է:

Սպիտակի լեռնացքի ոլորաններում ձյուն-ձմեռ է, մառախուղ, մերկասառույց: Սպիտակը պատվել է «մուգ» ճերմակով: Համատարած ճերմակի մեջ ավտոմեքենան զգուշորեն սահում է մերկասառույցով պատած ճանապարհով՝ դեպի ոլորաններ: Ամենուրեք փրկարարներ են. օգնում, ճանապարհում են ընթացքից ետ ընկած ճամփորդներին: Լոռեցի ուղեկիցներիցս մեկը, չիմանալով, որ ճանաչում եմ Գաբրիելյանին, ներկայացրեց նրան. *«Այս կողմերում եթե ասեն, որ Գաբրիելյանն ասում է՝ սևը սպիտակ է, ուրեմն՝ հենց էդպես է: Փոխգնդապետի կոչում ունի, բայց փրկարարական գործում էնպիսի համարում, որ նրան «գեներալ»՝ գլխավոր փրկարար են ասում»:*

Ու նորից հիշեցի «գեներալի» խոսքը՝ 91-ամյա Սերյոժա Դունամալյանի հետ հանդիպումից (հին հրշեջը դեռ մեզ հետ էր) հետո՝ ինձ ճանապարհելիս. *«Ոլորաններից այս կողմ ինչ պատահի, «911»-ի մեր տիրույթն է: Կօգնենք՝ ինչով կարող ենք»:*

Եվ օգնում է՝ չխնայելով ոչինչ...

Գագիկ ԵՂՅԱՆ
Սպիտակ-Երևան

911 Արտակարգ թերթ
N 47 (695)
15-21 դեկտեմբերի, 2017

Հանդիպում, քննարկում

ՀՀ ԱԻՆ-ում կազմակերպվել է հանդիպում-քննարկում՝ նվիրված Խոսրովի և Արտավանի անտառներում տեղի ունեցած հրդեհների հետևանքների վերացմանը, որին մասնակցել է ԱՄՆ անտառային ծառայության հրդեհների գնահատման փորձագիտական խումբը՝ Զենիֆեր Քրոֆթի գլխավորությամբ: Այցի նպատակն է աջակցություն ցուցաբերել անտառային հրդեհների հետևանքների վերացման գործին: Փորձագիտական խմբի ղեկավարին ընդունել է նախարար Դավիթ Տոնոյանը: Մանրամասները՝ mes.am-ում:

ՏԱՐԻՆ ՍԿՍԵԼ ՈՒ ԱՎԱՐՏԵԼ ՄԱՐԴԿԱՆՑ ՕԳՆԵԼՈՎ

Գուգարքի հրշեջ-փրկարարներն ամենուր են ու ամենահաս օրվա ցանկացած ժամին

«Ջոկատը փոքրաթիվ է, բայց իրար հասնող: Ուր էլ լինեն, երբ դեպքի վայր շտապող հրշեջ մեքենայի ազդանշանն են լսում, անձնական մեքենաներով արագ հասնում են գործընկերներին: Միշտ ասել եմ, որ 25 հրացանակիր ունեմ, մեկը մեկի կողքին կանգնած, պինդ, կոփված, առաջնագծում ծառայած տղաներ են և «Ապրիլյան քառօրյայի» ժամանակ էլ ջոկատս՝ իմ գլխավորությամբ, մեկ մարդու պես ցուցակագրվել էր Արցախ մեկնելու»,- ջոկատով հպարտ՝ Գուգարքի ՀՓՁ-ի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Սեյրան Խաչատրյանն է անկեղծ զրույցի բռնվում: 2014-ից է ստանձնել ջոկատի հրամանատարի պաշտոնը, իսկ մինչ այդ բավականին երկար ու հարուստ աշխատանքային ճանապարհ է անցել: Արմատներով Լոռու Մարց գյուղից է, 8-ամյա դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվում է Թումանյան բանավան, որտեղ էլ ավարտում է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: Շուտով համալրում է պոլիտեխնիկական ինստիտուտի Կիրովականի մասնաճյուղի ուսանողության շարքերը, մասնագիտանում «Շինարարական մեքենաներ և սարքավորումներ» բաժնում: Առաջին աշխատանքային փորձը ձեռք է բերում Կիրովականի ճանապարհաշինարարական տեղամասում, այնուհետև տեխնասարքերի գործարանում՝ աշխատում որպես կոնստրուկտոր, բաժնի պետ, իսկ 1995-ից ընդունվում է ներքին գործերի նախարարության Վանաձորի հրշեջ բաժին՝ իբրև պարեկապահակային ծառայության տեսուչ: *«1996-ին աշխատել եմ քրեական հետախուզության օպեր-լիազոր, 1998-ին ընդունվել ՆԳ նախարարության հրշեջ պահպանության վարչության Վանաձորի թիվ 21 ենթակա ռազմականացված հրշեջ մաս՝ որպես պահակախմբի պետ: 1999-2003 թթ. աշխատել եմ Վանաձորի թիվ 20 ինքնուրույն ռազմականացված հրշեջ մասում, 2004-ին Վանաձորի հրշեջ զորամասում ստանձնեցի կապի ծառայության պետի պաշտոնը, այնուհետև հրդեհային պետական տեսչության տեսուչի: Իսկ 2005-ին տեղափոխվեցի Լոռու մարզային փրկարարական վարչություն. աշխատել եմ որպես սպա, հրահանգիչ, ավագ հրահանգիչ, բնակչության պաշտպանության բաժնի պետ, մարզային ՃԿԿ-ի ավագ հրահանգիչ, իսկ 2014-ին նշանակվեցի Գուգարքի ՀՓՁ-ի հրամանատար»:* Թեև ծառայել է առանց ակնկալիքների, բայց նվիրված ծառայությունը մշտապես գնահատվել է ինչպես ղեկավար կազմի, հասարակության, այնպես էլ մարզային ու տեղական իշխանությունների կողմից: Բազմաթիվ պատվոգրեր, շնորհակալագրեր ունի խնամքով պահած: Նա նաև պատվոգրի է արժանացել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ մատաղ սերնդի դաստիարակության գործում ունեցած ավանդի համար, երբ հրահանգիչ աշխատելու ժամանակ դպրոցներում վարժանքներ էր անցկացրել: 2017-ին ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանի հրամանով պարգևատրվել է մեդալով՝ համակարգում 15 տարի անբասիր ծառայության համար: Բազմազբաղ փրկարար հոր գրաֆիկը չի խանգարել ընտանեկան ջերմ մթնոլորտում մեծացնելու և իրենց նպատակին հասցնելու երկու որդիներին՝ Դավիթին ու Անդրանիկին:

«1988-ին ընտանիք կազմեցի, սկզբում վարձով էինք ապրում: Երկրաշարժից հետո մեզ համար մետաղի թիթեղներից տնակ շինեցինք ու տեղափոխվեցինք այնտեղ: Մութ տարիներին ես ու մանկաբույժ կինս՝ Մարինե Ղազարյանը, որն այժմ թիվ 3 պոլիկլինիկայի փոխտնօրենն է, երեխաներին տնակում մեծացրինք, հետո տեղափոխվեցինք հանրակացարան: Հարևանների հետ սիրով ապրում էինք տնակային թաղամասում, ծնողներս էին գյուղից օգնում: Այժմ սեփական բնակարան ունենք, տղաներս բարձրագույն կրթություն են ստացել: Անդրանիկը Վանաձորում ատամնաբույժ է աշխատում, Դավիթը՝ Հայաստանի ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղն է ավարտել, ամուսնացել է, կնոջ ու երկու տարեկան որդու՝ Սեյրան Խաչատրյանի հետ Ռուսաստանում է ապրում»,- տարիների հեռվից անցած ուղին է հիշում զրուցակիս ու հպարտ նշում, որ անկախ դժվարություններից, որդիները ջերմությամբ ու սիրով շրջապատված մանկություն են ունեցել, իրենք կատարել են ծնողական ամենակարևոր առաքելությունը՝ հասարակության համար պիտանի ու հայրենասեր որդիներ են մեծացրել:

Գուգարք գյուղի երկհարկանի մասնաշենքում տեղակայված ջոկատը սպասարկում է շուրջ 15 հազար բնակչություն ունեցող 13 համայնք: Ամենահեռավոր անկյունը ջոկատից 31 կմ այն կողմ գտնվող Դսեղ գյուղն է: Համայնքներից կենցաղային կանչեր հազվադեպ են հնչում, այստեղ ավելի շատ դիմում են հրդեհների, ավտովթարների, որոնողափրկարարական աշխատանքների և այլ դեպքերում: Տարին հատկապես աչքի ընկավ հրդեհաշատ սեզոնով: Գուգարքի հրշեջ-փրկարարական ջոկատն ավելի քան 40 հրդեհների է արձագանքել սպասարկող համայնքներում:

«Անտառներում չոր խոտածածկույթներ հանգցնելու համար մեր ամենահաս «Ռենո»-ով կարողանում էինք նույնիսկ ամենաբարդ տեղանքները մագլցել: Մասնակցել ենք նաև Վանաձորի, Սպիտակի, Ստեփանավանի տարածքներում բռնկված հրդեհների մարմանը: Ամենագնացը ոչ միայն մեր մարզում ու մարզից դուրս է վերելքներ ու վայրէջքներ հաղթահարել, այլև Վրաստանի Բորժոմիի կիրճի անտառներում բռնկված մեծամասշտաբ հրդեհների ժամանակ: «Ռենոն» կարող է ցանկացած տեղից ջուր վերցնել, արագընթաց է, քիչ ծախստար, ամենադժվար տեղանքներում գործը գլուխ բերող»,- ոգևորված պատմում են Գուգարքի ՀՓՁ-ի տղաները, որոնք 2014-ից ամենագնացը ստանալուց հետո բազմիցս են նմանատիպ դեպքերի արձագանքել:

Տարեցտարի ջոկատը երիտասարդանում է, հին կադրերը հերթով վաստակած հանգստի են մեկնում, նրանց տեղը համալրվում է Գուգարքից, Վանաձորից և Թումանյանի տարածաշրջանից ջոկատ ընդունված երիտասարդ տղաներով:

Վանաձորցի էդգար Գրիգորյանն ավարտել է ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան՝ «Հրդեհային պաշտպանություն» բաժինը: Հեռակա ուսուցման 3-րդ կուրսից՝ 2012-ի սեպտեմբերից, աշխատանքի է անցել: *«Ակադեմիայում սովորելու տարիներին լավ հիմք էին դրել, փորձն էլ այստեղ ձեռք բերեցի: Առաջին լուրջ փորձությունս Փամբակ գյուղի անտառում բռնկված մեծ հրդեհն էր, առաջին հերթափոխում էի ծառայում: Փորձառուների հետ էի աշխատում դեպքի վայրում, կարողացանք մարել հրդեհը, կարևորը՝ ռիսկով էի կպել գործին»,-* հիշում է փ/ծ սերժանտ էդգարը և խոստովանում, որ ամեն դեպքից հետո սովորելու նոր բան է ունենում: Իր կոչումը պատվով կրող փրկարարը մտադիր է երկար տարիներ շարունակել ընտրած ճանապարհը: Ցանկացած լավ ավարտ ունեցող դեպքից հետո կրկին ու կրկին համոզվում է, որ իր ընտրությունը ճիշտ էր:

«2014-ին Գուգարքի վարչական շրջանում երկհարկանի փայտե տուն էր հրդեհվել, ծնողները տանը չէին, 7-8 տարեկան երեխաների ենք փրկել կրակի ճիրաններից: Ճիշտ հրդեհաշիջման արդյունքում էլ կարողացել ենք կանխել կրակի տարածումը դեպի հարևան քոթեջները: Լավ ես զգում, երբ կարողանում ես մարդկանց օգնության ձեռք մեկնել»,- հավելում է 26-ամյա էդգարը, որը ջոկատի մյուս տղաների պես ծառայում է բարեխղճորեն ու պատրաստ՝ ցանկացած պահի նետվելու դեպքի վայր:

Գուգարքի հրշեջ-փրկարարներն ամենուր են ու ամենահաս օրվա ցանկացած ժամին, նրանց ուղղված շնորհակալական խոսքն ու օրհնանքն անպակաս են: *«2016-ի հունիսին ահազանգ ստացանք, որ 84-ամյա մի տատիկ կորել է Եղեգնուտ գյուղի անտառում: Նա Թումանյան քաղաքից Եղեգնուտ էր գնացել քրոջ որդու գերեզմանին այցելելու: Հետո անձրև էր սկսվել, չթրջվելու համար մտել էր անտառ, մութն ընկել էր, և կորցրել էր ճանապարհը: Երկրորդ հերթափոխի տղաները հասան դեպքի վայր: Զանգեցինք տատիկի բջջայինին, պատասխանեց, թե երկու քարի արանքում նստած է: Տղաները գյուղացիներից մեկի հետ երկու ժամ տևած որոնումներից հետո գտան տատիկին՝ իսկապես երկու քարի արանքում նստած: Տատիկին փրկարարները անտառից գրկած ու անվնաս բերեցին տուն: Նա տղաներին շնորհակալություն հայտնեց ու օրհնանքներով ճանապարհեց»,-* ժպիտը դեմքներին՝ անցած դեպքն են վերհիշում ջոկատի հրշեջ-փրկարարները, որոնց սպասարկած դեպքերի ցանկը սկիզբ ու վերջ չունի:

«2016-ի դեկտեմբերին Թբիլիսիից 3 աղջիկ եկել էին Երևան՝ Հնդկաստանի դեսպանատանը վիզաներ ստանալու: Հետդարձին Վանաձորի ճանապարհին մերկասառույցի պատճառով չէին կարողացել ամառային անվադողերով շարունակել երթևեկությունը: Զանգահարեցին «911», գիշերը ժամը երեքին տղաները հրելով հանեցին արգելափակված մեքենան, իսկ աղջիկներին ուղեկցեցին ջոկատ, որտեղ տաք թեյ, մեր ունեցած սնունդը հյուրասիրեցինք, գիշերելու տեղ տրամադրեցինք, հաջորդ առավոտ ճանապարհեցինք Դիլիջան»,- պատմում է փ/ծ փոխգնդապետ Սեյրան Խաչատրյանը:

Գուգարքի ՀՓՁ հրամանատարն ուրախությամբ է փաստում, որ երիտասարդ փրկարարների հուսալի թիմ ու թիկունք ունի, տարին սկսել ու ավարտում են մարդկանց օգնելով: ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀՀ ԱԻՆ-ում մշակվում է հնարավոր խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած միգրացիոն հոսքերի կառավարման պլան: Այդ նպատակով ՀՀ ԱԻ նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ներգրավված են շահագրգիռ գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Փաստաթղթի մշակումը նախատեսված է ՀՀ կառավարության 2017 թ. մարտի 23-ի նիստի թիվ 12 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021 թթ. ռազմավարության գործողությունների ծրագրում:

Միգրացիոն հոսքերի կառավարումն իրականացնելու համար անհրաժեշտ է կանոնակարգել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը, նշվել է օրերս նախարարությունում կայացած քննարկմանը, որին մասնակցում էին ՀՀ կառավարման տարբեր պետական մարմինների պատասխանատու ներկայացուցիչներ:

Պլանի մշակմամբ և ներդրմամբ կանոնակարգվելու են՝

- ՀՀ տարբեր գերատեսչությունների գործառույթները սահմանային անցակետերում,
- միգրացիոն հոսքի կառավարմանն ուղղված գործողություններն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով առկա օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերը,
- սահմանային անցակետերի ընթացակարգերն ու միգրացիոն ճամբարի ծավալումը,
- մարզի ղեկավար կազմի (համայնքի) գործառույթները միգրացիոն հոսքի ՀՀ տարածք ներթափանցելու դեպքում:

Նշենք, որ ՀՀ ԱԻ նախարարությունը, ՄԱԿ-ի միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև ներգրավելով շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներին՝ այս տարվա օգոստոսին Գոգավանի սահմանային անցակետում անցկացրել է «Խոշոր աղետի կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած միգրացիոն հոսքերի կառավարում» թեմայով վարժանք:

Աղբյուր՝ mes.am

911 Արտակարգ թերթ
N 47 (695)
15-21 դեկտեմբերի, 2017

Արտակարգ ժամանակներ

Դեմ կամ կողմ լինելու հարց չկա, այլ՝ հասկանալու, ճանաչելու, ինչը համարում եմ մարդուն իսկապես արժանի միակ «զբաղմունքն» Այստեղ:

Ավագ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ՄՈԼՈՐԱԿ - ԿԱՐԿԱՄ



Եթե մտածում ես, ուրեմն՝ նաև ԿԱՍԿԱԾՈՒՄ ԵՍ, ԿԱՐԿԱՄՈՒՄ: Չեմ ուզում ասել՝ մտածելը հենց կասկածելն է, փորձում եմ ուրիշ բան ասել. «կարկամ»-ը երկու կես եմ անում և ունենում եմ ԿԱՐ ու ԿԱՄ, որոնք արդեն, թեկուզև՝ ենթագիտակցության մեջ, ուրիշ նշանակություններ էլ են նշմարում: Բայց հանգիստ թողնենք ենթագիտակցությանը…

Ինքն իրեն անպայման եվրոպակենտրոն քաղաքակրթության մեջ պատկերացնողի միտքը «կասկածելն ու կարկամելը» ակամա առնչում է նորկտակարանային հայտնի դրվագին. ապագա առաքյալը չի կարողանում քայլել ջրերի վրայով, և Ուսուցիչը հանդիմանում է նրան՝ ինչո՞ւ կասկածեցիր, անհավա՛տ…

Պարզ տեսանելի է «հակասությունը», որ գոյություն ունի հավատալու և մտածելու միջև: Այդուհանդերձ, հիշյալ հակասությունը նախևառաջ հոգևոր ոլորտում գործող իրողություն է: Ասում ենք նախևառաջ, որովհետև իմանալու և գործելու ոլորտների միջև տարված սահմանները պայմանականություններ են, թեպետև՝ անհրաժեշտ պայմանականություններ: Այնքան անհրաժեշտ, որ դրանք ավելին են, ըստ երևույթին, քան իրականությունն ինքը, որը սկզբունքորեն անիմանալի է, ու նաև այդ է պատճառը, որ իմանալին դարձյալ հենց պայմանականություններն են:

***

Վերևում ասացինք՝ քաղաքակրթություն: Պատահական բառ չէ, դա ՄԻԱԿ ՄԻՋԱՎԱՅՐՆ է, ըստ երևույթին:

ԱՌԱՆՑ ԿԱՍԿԱԾԱՆՔԻ փաստելով, որ մարդը հոգևոր արարած է, ի տարբերություն մյուս արարածների, նույն պահին իսկ գլխի ես ընկնում, որ մարդկանց աշխարհը բնորոշելիս հակված ես գործածելու առավելապես «քաղաքակիրթ» բառը: Դա լավագույն դեպքում, որովհետև որոշակի պարբերականությամբ, պատմությունը վկա, մարդն իր «քաղաքակիրթ» բարքը մի անհասկանալի բնազդով փոխարինում է «բարբարոսությամբ»:

(Գոնե փակագծերում հասցնենք ասել, որ ԱՌԱՆՑ ԿԱՍԿԱԾԱՆՔԻ ՈՐԵՎԷ ԲԱՆ ՊՆԴԵԼՆ ԻՆՔՆԻՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԱՐԱՐՔ է: Նույն փակագծերում էլ հիշենք, որ մարդուն համարում են ոչ միայն արարչության պսակ, այլ նաև (այդպիսի տեքստեր ևս կան)՝ գենետիկական սխալի «արգասիք» (այս տեսակետից Նիցշեի պնդումն ավելի ընդունելի է ու նույնիսկ՝ լավատեսական. «Մարդը մի բան է, որը պիտի հաղթահարվի»: Համենայն դեպս՝ լավ է, որ երկու հասկացություններն էլ ընդամենը ճանապարհի սկիզբ են նշում, և երբեք՝ վերջին հանգրվան - եթե այս անգամ էլ պայմանավորվենք, որ միշտ ժամանակ կա որևէ ճանապարհ անցնելու:)

Այսպիսով, Մեր Աշխարհն իր պատկերով՝ դեմք ու դիմագծերով, անհիշելի ժամանակներից սկսած, Դրախտից հետո, գերակշիռ մասով քաղաքակրթության ծնունդ է:

Արդյունքը չափազանց աշխարհիկ մոլորակն է, իր՝ թեպետ պոռթկումնավոր, բայցև աղոտ հիշեցումներով, որ Այլ Հնարավորություն, այնուամենայնիվ, Տրված է Եղել:

Մարդն արարվել է Ազատ Կամքով, մարդը կամովին Ընտրել է ա՛յս ճանապարհը, քաղաքակրթության ճանապարհը՝ դար առ դար Աշխարհիկացնելով իր մոլորակը:

Ինչպե՞ս: Ես կարծում եմ, մասնավորաբար, Հոգևոր Հաստատությունները փոխարինելով աշխարհիկ հաստատություններով և Հավերժական ու Հիմնարար Արժեքները վերաարժևորելով:

Հիմնարար Արժեքները մարդուն տրված են մեկ անգամ և ընդմիշտ: Ժամանակի ու տարածության որոշակի հատվածում ի՞նչ և ինչո՞ւ է փորձում «վերաարժևորել» քաղաքակրթությունը: Մանավանդ՝ հաջողում էլ է: Քաղաքակրթությունը «կարողանում» է վերաարժևորել, ասենք, Հավատարմությունը և ստանալ Դրա Հակառակ՝ իբրև նոր արժեք… Եվ դա անհեթեթ չի լինում, որովհետև լինում է համատարած:

Մարդու՝ քաղաքակրթության կողմից արտոնված այս գործողությունները գրեթե միշտ կոչվել են Հեղափոխություն՝ զանգվածային (երբեմն՝ ոչ այնքան) և արյունոտ (երբեմն՝ ոչ այնքան) մի Միջոցառում, որը գրեթե միշտ հիմնավորվել է ինչ-ինչ գաղափար(ախոսություն)ներով և միշտ ունեցել գրեթե նույն կարգախոսները:

Այնքան ու մինչև այնտեղ, որ Մշակույթն անգամ աշխարհիկանա, իբրև թե՝ հասու դառնա զանգվածներին:

Դեմ կամ կողմ լինելու հարց չկա, այլ՝ հասկանալու, ճանաչելու, ինչը համարում եմ մարդուն իսկապես արժանի միակ «զբաղմունքն» Այստեղ:

Ինչո՞ւ է Հողից հեռանալը (քաղաք, ասել է՝ քաղաքակրթություն հիմնելու նպատակով) հեռացնում Երկնքից նաև: Այդ ի՞նչ Ամբողջականություն է Քանդվում մարդու կենսագործունեության ընթացքում, որ բոլոր «լուսավոր ուղեղները» հանկարծ սկսում են քաղաքակրթության մայրամուտ կանխատեսել:

Ինչո՞ւ ոչ մի սահմանադրություն չի կարողանում դեմոկրատ դարձնել մարդուն, ինչո՞ւ դեմոսն ինքը չի ընդունում դեմոկրատիան:

Ինչո՞ւ մարդն իր առջև ծառացած հարցերի պատասխանները փնտրում է ո՛չ Այնտեղ, ստույգ՝ երբևէ պատասխաններ չպարունակած լայնություններում, ավելի ստույգ՝ հորիզոնական փռվածքներում:

ԿԱՍԿԱԾԸ ՍՐՏԻ ՄԵՋ խրած մի պնդում. նույն հարթության մեջ չեն կարող և՛ հարցեր առաջանալ, և՛ պատասխաններ ծնվել: Նույն տեղում հարցեր ու պատասխաններ մի կերպ զետեղելը մայր մտած քաղաքակրթության քրքրված տիկնիկին Նոր Ներկայացման մեջ զբաղեցնել կնշանակի: Նոր Ներկայացման բնորոշումը չունեմ: Այդուհանդերձ, պատասխան ստանալու համար հարթությունը պետք է փոխել…

***

Տարիներ առաջ մի հարցազրույց կարդացի գրական հանդեսում: Խոսվում էր մեր ծեռագիր մատյանների վերականգնման (ռեստավրացիա) աշխատանքների մասին, բայց խոսքի ընդգրկումը շատ ավելի մեծ էր և կարելի էր այդ խոսքում երանգներ (հոծ գույներ ու գծեր) գտնել, որոնք առնչվում էին հենց Պատասխանների Հարթությանը, ինչի մասին ասացի արդեն:

Մասնագետը կամ Հասկացողը, որ այս դեպքում ավելի տեղին է, վստահեցնում էր, որ լավ հայտնի է, թե ծաղկած մատյանների մանրանկարները ստեղծելիս ինչ նյութեր են օգտագործել Վարպետները. այն մանրանկարները, որոնք այդպես էլ չեն խունանում, որոնք անխաթար հասել են մեզ… ու թվարկում էր ներկատեսակները, սոխը, ոսկին… և ավելացնում. «Գիտենք, բայց նույն նյութերն օգտագործելով՝ նույնպիսի նկարազարդումներ ոչ մի կերպ չենք կարողանում ստանալ»: Դրանց որակի՛ մասին էր ասում, դրանց երկարակեցությա՛ն մասին էր ասում, ներազդելու կարողությա՛ն մասին նաև…

Ու ինքն էլ եզրակացնում էր՝ մի բան, այնուամենայնիվ, պակասում է, մի գլխավոր, մի շատ կարևոր բան… Գուցե դա հավա՞տն է: Ասում էր…

Ամեն ինչ չէ, որ պետք է տողատակ տանել, մարդն իմացել էր, որ առանց հավատի, չես ուզում՝ ասա՝ առանց հոգու, դա էլ չես ուզում՝ ի՛նքդ բառ գտիր, ի՛նքդ հասկացիր ու ինքդ ասա, որ կա մի բան, առանց որի որդան կարմիրը որդան կարմիր չէ, սոխը սոխ չէ, ոսկին անգամ ոսկի չէ:

Ի՞նչ եղավ. եղավ նո՞ւյնը՝ ինչու կասկածեցի՞ր, անհավա՞տ… Բայց հասկացանք նաև, որ սա աշխարհիկ մոլորակ է, այնպես չէ՞…

Ի՞նչ անել: Զրուցել, մտածել, հավատալ որոնման շարունակությանը: Գուցե: ■

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅՏԱՏՈՒ՝
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N224-Ն որոշում
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի մայիսի 6-ի N487-Ն հրամանի հավելված N 1

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից տրվում է հայտարարություն «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի թափուր պաշտոնում անձի ընտրության (նշանակման) համար:

Մրցույթը կանցկացվի 2018 թվականի փետրվարի 8-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, 2-րդ մասնաշենքի 2-րդ հարկում՝ Նախարարության խորհրդակցության սենյակում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Կազմակերպության տնօրենի պաշտոնում կարող է նշանակվել այն գործունակ չափահաս Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որը տիրապետում է գրական հայերենին, ունի բարձրագույն կրթություն, առնվազն մեկ օտար լեզվի իմացություն, ծեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա, կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված աշխատանքային և մասնագիտական հմտություններ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին», «Հարկերի մասին» «Բյուջետային համակարգի մասին» «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները մինչև 2017 թվականի դեկտեմբերի 29-ը նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (անհրաժեշտ է նշել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N224-Ն որոշման հավելված N 1-ի 8-րդ կետում նշված պայմանները),

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

3) քաղվածք աշխատանքային գրքույկից,

4) ինքնակենսագրություն,

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները,

6) կադրերի հաշվառման թերթիկ (լրացված),

7) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),

9) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև մրցույթի այլ մանրամասներին տեղեկանալու համար ցանկացողները կարող են դիմել Նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ **+374 12 317865, +374 12 317830:**

Հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8
Վեբ կայք՝ http://www.mes.am

911 Արտակարգ թերթ
N 47 (695)
15-21 դեկտեմբերի, 2017

Կյանքն ըստ Անտոն Չեխովի

Դու ուզում ես հարցնել, թե ի՞նչ է կյանքը: Ավելի լավ է՝ հարցրու՝ ի՞նչ է գազարը: Գազարը գազար է, և դրա մասին ուրիշ ոչինչ հայտնի չէ:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈԹՔՈՒՄ

«911.Արտակարգ թերթի» սիրելի ընթերցող,
այս հոդվածով ամփոփում ենք այս տարվա մի շարք համարներում ձեր ուշադրությանը ներկայացված Հայաստանի պատմական երկրաշարժերի մասին պատմող հոդվածաշարի հրատարակումները՝ ներկայացնելով միջնադարյան Հայաստանի վերջին հզոր իշխանական տան՝ Մելիք-Շահնազարյանների տիրույթները հանդիսացած Սոթք գավառում վերջին տարիներին իրականացված հնագիտական և երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում նոր լույսի ներքո ներկայացող տարածաշրջանի անցյալի պատմությունը:



Սոթք գյուղը (և համանուն լեռնադաշտը) գտնվում է Գեղարքունիքի մարզի հարավարևելյան հատվածում, որտեղ հնագիտական լայնածավալ ուսումնասիրություններ է կատարում ՀՀ ԳԱԱ հնագիտական-երկրաբանական արշավախումբը: Բարեբեր դաշտավայրը, ռազմավարական կարևոր դիրքը և Մերձավոր Արևելքի ամենամեծ ոսկու հանքի առկայությունը կանխորոշել են բնակավայրի տարածաշրջանային կենտրոն լինելու հանգամանքը հնագույն ժամանակներից մինչ միջնադար: Այդ մասին հաղորդում են ինչպես վիմագրի սկզբնաղբյուրներն ու մատենագրական տեղեկությունները բնակավայրի անցյալի պատմության վերաբերյալ, այլև հնագիտական պեղումների և երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքներով ձեռք բերված տվյալները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնակավայրը շարունակաբար բնակեցված է եղել սկսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից:

Սոթքի զարգացմանը մեծապես նպաստել են ոսկու հարուստ պաշարները, որն արտահանվում էր Միջագետք դեռևս շումերների ժամանակներում: Ուրարտական սեպագրերում տարածաշրջանը «Ուշկիանի» անունով է հիշատակվում, որն հնչյունափոխված «Ոսկեշեն» ձևով շարունակվել է կիրառվել մինչ ուշ միջնադար և ուղղակիորեն կապված էր ոսկու արդյունահանման հանգամանքի հետ: Հայտնաբերվել են բազմաթիվ հանքահորեր, որոնք շահագործվել են հնագույն ժամանակներում:

Սոթքը շարունակաբար եղել է Ծավդեից իշխանների, ապա Առանշահիկների և Դոփյանների տիրույթներում: 16-րդ դարում Սոթքը դառնում է Մելիք-Շահնազարյանների իշխանանիստ ավանը, ովքեր ժամանակի ամենաազդեցիկ տոհմն էին և կրում էին Արարատյան մելիքների գահերեց տիտղոսը: Հզորացած Մելիք-Շահնազարյանների տոհմաճյուղերը 17-րդ դարում հաստատվում են նաև Գանձակում և Արցախում՝ հիմք դնելով Ոսկանապատի ու Վարանդայի մելիքություններին:

Սոթքը, հանդիսանալով Ռմբոստյան կիրճով Արցախ մտնող կարևորագույն լեռնանցք բարձրացող ճանապարհի վերջին բնակավայրը, ռազմավարական հանգրվան է եղել միջնադարյան Դվին-Պարտավ առևտրական ճանապարհին: «Սոթք-1» պայմանական անունն ստացած վաղմիջնադարյան ամրոցի պեղումները ցույց տվեցին, որ այն ունեցել է այդ ճանապարհը վերահսկող ֆունկցիա և մոտակա «Նորաբակ-1» ամրոցի հետ կազմել Սևանի հարավարևելյան ավազանի պաշտպանությունն իրականացնող ամրաշինական համակարգի մի օղակը:

Արշավախումբը հայտնաբերեց նաև այդ ճանապարհին գտնվող և միջնադարյան արաբ աշխարհագիրների կողմից հիշատակված Զաութիս քարավանատունը՝ կիսավեր վիճակում, որի պեղումները նախատեսվում են առաջիկայում:

Ցավոք, մեր օրեր չեն հասել Սոթքի երբեմնի իշխանական պալատները, և անցյալի կառույցներից միայն Ս. Աստվածածին եկեղեցին է, որ կանգուն է այժմ: Եկեղեցին ունի շինարարական մի քանի հորիզոններ, որոնցից ամենակարևոր հիմնանորոգումը կատարվել է 1276 թվականին՝ համաձայն հարավային պատին գտնվող արձանագրության:

Թեև մինչ օրս չունենք վիմագրական կամ մատենագրական որևէ տվյալ՝ երկրաշարժերի հետևանքով Սոթքում տեղի ունեցած վնասների վերաբերյալ, սակայն պետք է ենթադրել, որ գյուղն ընկած է եղել Գանձակի 1139 թ. 10-բալանոց ուժեղ երկրաշարժի ավերածության գոտում՝ պայմանավորված էպիկենտրոնի՝ գյուղին չափազանց մոտ գտնվելու հանգամանքով: Եկեղեցու եթե ոչ այս, ապա այլ նորոգումներից մեկը, անպայմանորեն, պիտի կատարված լինի այս երկրաշարժի հետևանքներով պայմանավորված:

Հուսանք, որ առաջիկա տարիներին նախատեսված ուսումնասիրությունները նոր տվյալներ ի հայտ կբերեն այս, նաև այլ երկրաշարժերի հետևանքների վերաբերյալ, որոնք պատահել են Սոթքի տարածաշրջանում՝ պատմության անհիշելի ժամանակներից սկսած:

Ավետիս ԳՐԻԳՈՐՅԱՆ
«ՍՊԱՐՄԾ» ՊՈԱԿ-ի ԲՏԱԿ-ի առաջին կարգի մասնագետ, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ

Հեղ. կողմից.- *«911.Արտակարգ թերթի» մի շարք համարներում «Վիմագրություն և երկրաշարժեր» խորագիրը կրող հոդվածաշարի հրատարակության ընթացքին աջակցելու և օգտակար քննարկումների համար իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում թերթի գլխավոր խմբագիր Գագիկ Եղյանին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի խորհրդական Հրաչ Պետրոսյանին և «ՍՊԱՐՄԾ» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Սոս Մարգարյանին:*

ԲԱՐԻ ԵՐԹ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

34 շրջանավարտ՝ մագիստրոսի կրթական ծրագրով

ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան մագիստրոսի կրթական ծրագրի երկու մասնագիտության գծով՝ «Փրկարարական գործ» և «Ճգնաժամային կառավարում», տվեց 34 շրջանավարտ, ովքեր ձեռք են բերել արտակարգ իրավիճակներում գործելու մասնագիտական գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ: ՃԿՊԱ-ն մագիստրոսի որոկավորմամբ շրջանավարտ առաջին անգամ տվել է 2009 թվականին, սա 9-րդ անգամն էր:

34 շրջանավարտից 23-ն աշխատում են ՀՀ ԱԻՆ տարբեր ստորաբաժանումներում, 2-ը՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրերում, 7-ը՝ ՀՀ այլ ուժային կառույցներում և տարբեր կազմակերպություններում:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը ղեկավարում էր ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Վրեժ Գաբրիելյանը, անդամներն էին ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վահագն Օհանյանը, ակադեմիայի ռեկտոր, փ/ծ գեներալ-մայոր Համլետ Մաթևոսյանը, նախարարության և ակադեմիայի այլ մասնագետներ: Շրջանավարտները խոստացան իրենց գործունեությամբ ու աշխատանքով ապացուցել ակադեմիայի տված գիտելիքների և մագիստրոսի աստիճանի արդյունավետությունը:

«Համոզված ենք, որ մագիստրոսի դիպլոմը սկիզբ կդառնա մի նոր հաղթական ճանապարհի, որտեղ անհրաժեշտ կլինի կիրառել ստացված ինչպես տեսական, այնպես էլ գործնական գիտելիքները: Ցանկանում ենք, որ իրականանան ակադեմիայի շրջանավարտների բոլոր երազանքներն ու խաղաղ լինի նրանց ուղին», - մեզ հետ զրույցում ասաց ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հայկանդուխտ Ղարիբյանը:

Բարի երթ, շրջանավարտ, հաջողությունը քեզ միշտ ուղեկից: ■

911 Արտակարգ թերթ
N 47 (695)
15-21 դեկտեմբերի, 2017

Համբերանքի չիբուխը

է՞հ, ծերացա՞նք, ըսել է՝ եկանք հասանք ծերին: Ամեն բանի ծերին, կյանքի ծերին, աշխարքի ծերին... Վնաս չունի: Մեկ խնդրանք ունիմ - քանի ողջ եմ, ոտ ու ձեռով մնամ, գետնին գերի չըլնիմ, աշխատեմ, ու էստեղ, ջաղացիս դուռը նստած, համբերանքի չիբուխս քաշեմ, ու ամեն օր լսեմ բարի, ուրախ լուրեր աշխարքիս չորս դիերից, ամեն կողմերից: Էլ ուրիշ բան չեմ ուզի...

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Պատմելը ինձպես տր է

8

Օգնում են փրկարարները

Արգելափակումից դուրս է բերվել 15 ավտոմեքենա

Անցած յոթ օրում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ ավելի քան 250 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր մեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտապօգնություն, «Վեոլիա Ջուր», էլցանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանմաքրման ծառայություն, ոստիկանություն և այլն:

Գրանցվել է 40 հրդեհ. այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պտղատու և դեկորատիվ ծառեր: Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 60 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաքաշ, սակավաշարժ քաղաքացուն բնակարանից իջեցնելու, բնակարան բարձրացնելու կամ բնակարանում տեղից տեղ տեղափոխելու կանչեր են սպասարկել Երևանի Կենտրոն, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների փրկարարները: Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր, վերելակի հորան, նկուղ, տանիք, շենքի օդատար-ծխատար, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: Տարբեր տարածքներում արգելափակված մի շարք մեքենաներ են դուրս բերվել երթևեկելի հատված:

Այլ կանչեր. էրեբունու փրկարարներն ահազանգ են ստացել, թե Նուբարաշենի թռչնաբուծական ֆաբրիկայի մոտակայքում

քաղաքացին ընկել է ձորը, ոտքերը սառած են, չի կարողանում ինքնուրույն բարձրանալ: Հրշեջ-փրկարարները տղամարդուն հանել են ձորից, նա շտապօգնության մեքենայով ուղևորվել է հիվանդանոց, սակայն որպեսզի անց բժիշկները ահազանգել են, թե շտապօգնության ավտոմեքենան արգելափակվել է ցեխակույտի մեջ: Հրշեջ-փրկարարներն արգելափակումից դուրս են բերել ավտոմեքենան: Քանաքեռ-Զեյթունի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Հաղթանակի զբոսայգու «Մայր-Հայաստան» հուշահամալիրի մոտակայքում թռչող սարքն արգելափակվել է ծառի ճյուղերի արանքում: Հրշեջ-փրկարարները սարքն իջեցրել են ծառից:

Գեղարքունիքի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Սոթք-Քարվաճառ ճանապարհին մեքենաներ են արգելափակվել: Ուլ ժամում հրշեջ-փրկարարներն արգելափակումից դուրս են բերել 15 ավտոմեքենա (50 ուղևորով) և շուրջօրյա հերթապահություն սահմանել: ■

Նոյեմբերի խոշոր հրդեհները

2017 թվականի նոյեմբերին ՀՀ ԱԻՆ Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունում հաշվառվել է 101 հրդեհ՝ 66 միլիոն դրամի նյութական վնասով, վնասվածք է ստացել 5 մարդ:

Խոշոր հրդեհներից են՝

1. 1 նոյեմբերի, Կոտայքի մարզ, գյուղ Արամուս, 1-ին փողոց, թիվ 12, 14, 16 տներ: Նյութական վնասը՝ 2 650 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ վառարանի տեղակայման կանոնների խախտում:

2. 5 նոյեմբերի, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վազաշեն, 28 փողոց, թիվ 10 տուն: Նյութական վնասը՝ 1 682 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ երեխայի խաղը կրակի հետ:

3. 12 նոյեմբերի, Սյունիքի մարզ, Քաջարան-Կապան ավտոմայրուղի, «Օպել» մակնիշի ավտոմեքենա: Նյութական վնասը՝ 1 300 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ վառելիքի արտահոսք:

2. 14 նոյեմբեր, Արմավիրի մարզ, գյուղ Նորակերտ, Բաղրամյան փողոց, թիվ 25 տուն: Նյութական վնասը՝ 2 000 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:

5. 19 նոյեմբերի, Տավուշի մարզ, գյուղ Աչաջուր, խոտի դեզ: Նյութական վնասը՝ 1 600 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը պարզաբանվում է: ■

Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն

Իմացի՛ր և օգնի՛ր

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Այրվածքներ. վարակի ներթափանցման կանխում

Վարակի ներթափանցումը կանխելու կամ նվազեցնելու նպատակով ծածկեք այրված մակերեսը ստերիլ անձեռոցիկով կամ մաքուր գործվածքով և թույլ վիրակապեք: Եթե այրվածքն ընդգրկում է մեծ մակերես (մարմնի 10%-ից ավելին), ապա ծածկեք այն մաքուր չոր սավանով կամ մազախավ չունեցող այլ գործվածքով: Այրվածքների դեպքում մի օգտագործեք կարագ, յուղ կամ այլ միջոցներ: Դրանք կարող են վարակի աղբյուր դառնալ: Բացի դրանից, դրանք այրված մակերեսին քսելիս, դուք կարող եք վնասել բշտերը: Հնարավորության դեպքում տեղադրեք չոր ստերիլ անձեռոցիկ և ամրացրեք կպչուն սպեղանիների կամ թույլ վիրակապի միջոցով:

Մի բացեք և մի վնասեք բշտերը, հակառակ դեպքում կտրուկ կմեծանա վարակի ներթափանցման վտանգը: Այրվածքը մշակելու ժամանակ մի շնչեք այրվածքի վրա և

մի դիպեք նրան: Թեթև, մակերեսային և ոչ տարածուն այրվածքները, որոնք չեն պահանջում բժշկական միջամտություն, մշակվում են վերքերի նման: Լվացեք այրված մակերեսը հոսող ջրի տակ և այն պահեք մաքուր: Այս դեպքերում կարելի է օգտագործել հատուկ հակաայրվածքային քսուքներ: Ուշադիր եղեք և հետևեք վարակի ներթափանցման հետևանքով զարգացող նշաններին: ■

Աշխարհում 17 մլն երեխա աղտոտ օդ է շնչում

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը՝ UNICEF, հրապարակել է «Վտանգ օդում. ինչպես է օդի աղտոտվածությունն ազդում փոքր երեխաների մտավոր զարգացման վրա» զեկույցը: Ըստ փաստաթղթի, աշխարհում 17 միլիոն մինչև մեկ տարեկան երեխա շնչում է օդ, որի աղտոտվածությունը վեց անգամ գերազանցում է միջազգային ընդունված չափանիշը: Այս 17-ից 12 մլնն ապրում է Հվ. Աֆրիկայում:

Զեկույցի հեղինակները նշում են, որ օդի աղտոտվածությունը ոչ միայն բնապահպանական արտակարգ իրավիճակներ է ծնում, այլև դառնում է երեխաների տարատեսակ հիվանդությունների պատճառ՝ նյարդային, ուռուցքային և այլն:

Հաստատվել է աղտոտված օդ շնչելու և մտավոր զարգացման կապը: Անգամ եթե հղի կինն է աղտոտ օդ շնչում, նրա ապագա բալիկի մտավոր մակարդակը չորս անգամ ցածր է լինում հասակակիցների մտավոր մակարդակից:

Զեկույցի համաձայն՝ աղտոտ օդային միջավայրում ապրող երեխաներ ամենաշատը Հարավային Աֆրիկայում են՝ 1

մլն երեխայից միջինը՝ 33,1 երեխա: Ամենաքիչը՝ Հս. Ամերիկայում՝ մեկ մլնից՝ 3,3 երեխա: Հայաստանը զեկույցի Արևելյան Եվրոպա-ԱՊՀ բաժնում է: Այս տարածաշրջաններում 1 մլն երեխայից 6,1 երեխա ապրում է աղտոտված օդով բնակավայրերում: ■

911 Արտակարգ թերթ
ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Շաբաթաթերթ

Հրատարակիչ՝ **ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ**

Գրանցման վկայական՝ 03Ա061283, 24.08.2005

Գլխավոր խմբագիր՝ **Գագիկ ԵՂՅԱՆ**

Համարի պատասխանատու՝ **ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Նյութերը չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս հղումը թերթին պարտադիր է:
Տպագրված է ԱՁ «Արման Ասմանգուլյան» տպագրատանը.
Երևան, Հրաչյա Ներսիսյան, 1, 125
Ծավալը՝ 2 պայմ. տպ. մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 14.12.2017, ժամը՝ 16:50:
Տպաքանակ՝ 3376: Պատվեր՝ 47
Հասցե՝ Երևան, Աճառյան 1
էլ փոստ՝ artakarg.tert@gmail.com, info@911tert.am
Կայք՝ www.mes.am, www.911tert.am
Հեռ.՝ 060 691 000 (502, 503)
Գինը՝ 140 դրամ:

©
Գլխագիրը՝ **Արտակ Բաղդասարյանի**

Գլխագրի և վերնագրային տառատեսակները՝ **Մկրտիչ Մաթևոսյանի**